

Կ-328<sup>1</sup>-18.09.2013-ԳԿ-010/2

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՔԸ**

**«ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԵՎ ՀԵՏԲՈՒՀԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ»  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ  
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** «Բարձրագույն եւ հետբուհական մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության 2004 թվականի դեկտեմբերի 14-ի ՀՕ-62-Ն օրենքի /այսուհետ՝ Օրենք/՝ 6-րդ հոդվածի՝

1. 4-րդ մասից հանել «վճարովի՝ առանց տարեկետման իրավուքի» բառերը.

2. Լրացնել նոր 4<sup>1</sup> ., 4<sup>2</sup> ., 4<sup>3</sup> ., 4<sup>4</sup> . -րդ մասերով՝ հետեւյալ բովանդակությամբ.

«4<sup>1</sup>. Բարձրագույն ուսումնական հաստատությունը վճարովի համակարգում սովորող ուսանողական համակազմի առնվազն տաս տոկոսին՝ ուսանողների վարձավճարներից գոյացած բյուջեի առնվազն յոթ տոկոսի չափով, իր միջոցների հաշվին՝ հիմք ընդունելով բարձր առաջադիմությունը եւ սոցիալական խումբը, ուսանողական նպաստի ձեւով ուսման վարձի մասնակի փոխհատուցում է հետեւյալ կարգավիճակ ունեցող ուսանողներին.

1) սոցիալապես անապահով (ընտանիքների անապահովության սահմանային միավորից բարձր միավոր ունեցող ընտանիքների) ուսանողներին՝ առնվազն 30%,

2) 18 տարին լրանալուց հետո առանց ծնողական խնամքի մնացած ուսանողներին մինչեւ 23 տարին լրանալը՝ առնվազն 50%,

3) 23 տարին չլրացած միակողմանի ծնողազուրկ /միածնող/ ուսանողներին՝ առնվազն 50%,

4) մինչեւ մեկ տարեկան երեխա ունեցող ուսանողներին՝ առնվազն 50%,

5) երեք եւ ավելի անչափահաս, կամ երեք եւ ավելի ուսանող երեխա ունեցող ընտանիքների ուսանողներին՝ առնվազն 30%,

6) 1-ին կամ 2-րդ խմբերի հաշմանդամ, այդ թվում՝ հաշմանդամ ազատամարտիկ ծնողներ ունեցող ուսանողներին՝ առնվազն 30%,

7) մարտական հեթապահություն իրականացնող զորամասերում մարտական հեթապահության մեջ ընդգրկված պարտադիր ժամկետային զինվորական ծառայություն անցած ուսանողներին՝ առնվազն 30%,

8) սոցիալապես անապահով (ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված անապահովության 0 միավորից բարձր միավոր ունեցող ընտանիքների) ուսանողներին՝ առնվազն 20%,

9) բարձրագույն ուսումնական հաստատության կողմից կարող է սահմանվել՝ այլ կարգավիճակ ունեցող ուսանողներին:

4<sup>2</sup> . Ուսանողական նպաստի ձեռով ուսման վարձի մասնակի փոխհատուցում առնվազն 50%-ի չափով տրամադրվում է ուսանողական նպաստների համակարգում չընդգրկված երկու կիսամյակ անընդմեջ, առավել բարձր առաջադիմություն ցուցաբերած ուսանողներին, ովքեր ուսանողական նպաստի ձեռով ուսման վճարի փոխհատուցման համար անցկացված փոխատեղման մրցույթի արդյունքում զրկվել են նպաստի իրավունքից մինչև 0.1 միավոր տարբերությամբ:

Սույն հոդվածով, ինչպես նաև այլ իրավական ակտերով սահմանված մի քանի արտոնություններին հավակնելու դեպքում ուսանողը կարող է օգտվել դրանցից միայն մեկից, որի դեպքում կիրառվում է մասնակի փոխհատուցման առավելագույն չափը:

4<sup>3</sup> . Ուսանողական նպաստի ձեռով ուսման վարձի մասնակի փոխհատուցումից ուսանողը կարող է օգտվել բարձրագույն ուսումնական հաստատությունների կողմից բակալավրի եւ մագիստրոսի համար սահմանված միջին որակական գնահատականի /ՄՈԳ/ շեմը հաղթահարելու դեպքում:

Առաջին կուրսի ուսանողները, ուսման վճարի մասնակի փոխհատուցման իրավունքից կարող են օգտվել միայն ուսումնառության երկրորդ կիսամյակից սկսած:

4<sup>4</sup> . Բարձրագույն ուսումնական հաստատությունները տվյալ տարվա ուսանողական նպաստի ձեռով ուսման վարձի մասնակի փոխհատուցման տրամադրման վերաբերյալ մինչև հաջորդ տարվա ապրիլ 1-ը ներկայացնում են հաշվետվություն կրթության պետական կառավարման լիազորված մարմնին:

Բարձրագույն ուսումնական հաստատության կողմից ուսանողական նպաստի ձեռով ուսման վարձի մասնակի փոխհատուցման տրամադրման նկատմամբ վերահսկողությունը իրականացնում է կրթության պետական կառավարման լիազորված մարմինը:»:

**Հոդված 2.** Օրենքի 21-րդ հոդվածի՝

1. 1-ին մասը լրացնել նոր 14)-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«14) ուսման վարձի առավելագույն չափի սահմանումը՝ ըստ կրթական աստիճանների եւ հավատարմագրման արդյունքների: »:

2. 2-րդ մասը լրացնել նոր 12)-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«12) միջին որակական գնահատականի հաշվարկման մեթոդաբանության մշակումը:»:

**Հոդված 3.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2014 թվականի սեպտեմբերի 1-ից:

**ԱՄՓՈՓԱԹԵՐԹ**

2014թ. ապրիլի 28-ին ՀՀ ԱԺ կողմից առաջին ընթերցմամբ ընդունված «Կրթության մասին» ՀՀ օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» և «Բարձրագույն և հետբուհական կրթության մասին » ՀՀ օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի(Կ-328-18.09.2013-ԳԿ) վերաբերյալ ԱԺ պատգամավորների դիտողությունների և առաջարկությունների

Առարկության, առաջարկության հեղինակը, Գրության ստացման ամսաթիվը, գրության համարը	Առարկության, առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխություն
1	2	3	4
<p><b>Մարտին Սարգսյան</b> /Հ. 10-339, 29.04.2014/</p>	<p>1.«Բարձրագույն և հետբուհական կրթության մասին » ՀՀ օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 1-ին հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի 2) ենթակետը վերաշարադրել; հետևյալ խմբագրությամբ՝ «առանց ծնողական խնամքի մնացած ուսանողներին՝ առնվազն 50%»&gt;&gt;</p> <p>2. «Բարձրագույն և հետբուհական կրթության մասին » ՀՀ օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 1-ին հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի 3) ենթակետը վերաշարադրել; հետևյալ խմբագրությամբ՝ «միակողմանի ծնողազուրկ /միածնող/ ուսանողներին՝ 50%»&gt;&gt;</p>	<p>1. Չի ընդունվել , քանի որ «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության » ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն «3. Պետական միջին մասնագիտական կամ բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունված՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխաների ուսուցման ծախսերը կատարվում են պետական բյուջեի միջոցների հաշվին: Միջին մասնագիտական և բարձրագույն</p>	

		<p>ուսումնական հաստատություններում սովորող՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին վճարվում է կրթաթոշակ՝ տվյալ ուսումնական հաստատությունում սահմանված կրթաթոշակի 150 տոկոսի չափով:&gt;&gt;</p> <p>2. Չի ընդունվել , քանի որ նախարարությունը առաջնորդվել է &lt;&lt;Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության &gt;&gt; ՀՀ օրենքով, որի 2-րդ հոդվածը սահմանում է, որ առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձինք են համարվում 18-23 տարեկան անձինք:</p>	
<p><b>Արտակ Ջաբարյան</b> <b>/Հ.10-342, 29.04.2014/</b></p>	<p>&lt;&lt;Բարձրագույն և հետբուհական կրթության մասին &gt;&gt;ՀՀ օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին&gt;&gt; ՀՀ օրենքի նախագծի 1-ին հոդվածի 2-րդ կետի 6) ենթակետում &lt;&lt;առնվազն 30%&gt;&gt; բառերի փոխարեն գրել &lt;&lt;առնվազն 50%&gt;&gt; .</p>	<p>1. Չի ընդունվել , քանի որ ԲՈՒՀ-ը նախագծի 4.1 մասով սահմանված կատեգորիաների ուսանողների ուսման վարձերը փոխհատուցում է իր միջոցների հաշվին, ապա առաջարկվող տոկոսի բարձրացումը հավելյալ ֆինասական ծախսեր կստեղծի ԲՈՒՀ-ի համար, բացի դրանից</p>	

		<p>առնվազն բառը հայեցողական հնարավորություն է տալիս ԲՈՒՀ-ին միջոցների առկայության դեպքում ավել տոկոս նախատեսել:</p>	
<p><b>Կարինե Աճեմյան</b> /Հ.10-271, 27.03.2014/</p>	<p>&lt;&lt;Կրթության մասին&gt;&gt; ՀՀ օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին&gt;&gt; օրենքի նախագծի &lt;&lt;Հոդված 3. &lt;&lt;հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից&gt;&gt; բառերը փոխարինել &lt;&lt;2014թ. սեպտեմբերի մեկից &gt;&gt; բառերով</p>	<p>Ընդունվել է հետևյալ խմբագրությամբ՝ <b>Հոդված 3. Անցումային դրույթներ</b></p> <p>1.Սույն Օրենքն ուժի մեջ է մտնում 2015 թվականի հունվարի 1-ից:</p> <p>2.Սույն Օրենքի հոդված 1-ով սահմանված դրույթները տարածվում են 2015 թվականին և դրանից հետո ընդունված ուսանողների վրա:</p> <p>Քանի որ, օրենքը նախատեսում է ԲՈՒՀ-երի կողմից կատարվող ծախսերի ավելացում, ինչը նախատեսված չէ ԲՈՒՀ-երի 2014թվականի բյուջեներով, որոնք արդեն իսկ հաստատված են կառավարման խորհուրդների կողմից, ապա օրենքի ուժի մեջ</p>	

		<p>մտնելը 2014 թվականի սեպտեմբերի 1-ից նախատեսելը կհանգեցնի օրենքով սահմանված պահանջների կատարման էական դժվարությունների: Այդ իսկ պատճառով նախատեսվել է օրենքի՝ 2015 թվականի հունվարի մեկից ուժի մեջ մտնելը :</p> <p>Իսկ անցումային դրույթների 2-րդ մասով հստակեցվում է այն ուսանողներ շրջանակը ում վրա տարածվելու են Օրենքի հոդված 1-ով սահմանված դրույթները :</p>	
--	--	---	--